ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀ-ԲՆ-ԴՇ-14/07

ք. Երևան «30» «հունվարի» 2014թ.

Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարությունը, ի դեմս նախարարության աշխատակազմի ղեկավար **Է.Փիրումյանի** (այսուհետ՝ պետական մարմին), որը գործում է պետական մարմնի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և **«Խոսրովի անտառ» պետական արգելոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունը**, ի դեմս տնօրեն **Հ.Հովակիմյանի** (այսուհետ՝ կազմակերպություն), որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այուհետ՝ միասին՝ կողմեր), հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի դեկտեմբերի 19-ի թիվ 1414-Ն որոշումը (այսուհետ՝ որոշում), **«Խոսրովի անտառ» պետական արգելոցի պահպանության, գիտական ուսումնասիրությունների կատարման ծառայություններ»** ծրագրի՝ բաժին 05, խումբ 04, դաս 01, ծրագիր 08 (բնության հատուկ պահպանվող տարածքներում, ազգային պարկերում, պետական արգելոցներում պահպանության, գիտական ուսումնասիրությունների, անտառտնտեսական միջոցառումների իրականացում) (այսուհետ՝ ծրագիր), իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Սույն պայմանագրով պետական մարմինը պարտավորվում է ծրագրի իրականացման նպատակով կազմակերպությանը հատկացնել որոշմամբ նախատեսված՝ մինչև **99 038 700 (իննսունինը միլիոն երեսունութ հազար յոթ հարյուր) ՀՀ դրամ գումար**, իսկ կազմակերպությունը պարտավորվում է ծրագիրն իրականացնել որոշմամբ և սույն պայմանագրով սահմանված կարգով:

1.2. Ծրագրով նախատեսված կազմակերպության կողմից իրականացվելիք միջոցառումները (այսուհետ՝ միջոցառումներ) ներկայացված են սույն պայմանագրի հավելված 1-ում:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1. Պետական մարմինն իրավունք ունի՝

2.1.1. ցանկացած ժամանակ (այդ թվում՝ լիազոր մարմնի միջոցով) ստուգելու կազմակերպության կողմից իրականացվող միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

2.1.2. որոշմամբ սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում չընդունելու իրականացված միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և կազմակերպությունից պահանջելու վճարել սույն պայմանագրի 5.1 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3. առանց իրականացված միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

ա. կազմակերպությունը ժամանակին չի սկսում ծրագրի իրականացումը, կամ ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

բ. կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է ծրագրով նախատեսված առանձին միջոցառումների իրականացման ժամկետները (միջոցառումների իրականացման ժամկետներ նախատեսված լինելու դեպքում),

գ. իրականացված միջոցառումները չեն համապատասխանում ծրագրով սահմանված պահանջներին.

2.1.4. սույն պայմանագիրն օրենքով կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ միջոցառումների արդյունքները:

2.2. Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1. իրականացված միջոցառման արդյունքը պետական մարմնի կողմից ընդունվելու դեպքում պահանջելու վճարել իրեն հասանելիք գումարը.

2.2.2. պետական մարմնի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները:

2.3. Պետական մարմինը պարտավոր է՝

2.3.1. ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել կազմակերպությանը.

2.3.2. կատարել ծրագրի (առանձին միջոցառումների) իրականացման մոնիթորիգ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական կառավարման մարմինների հետ.

2.3.3. իրականացնել ծրագրով նախատեսված այլ աշխատանքներ.

2.3.4. իրականացված միջոցառման մասին ներկայացված կատարողական հաշվետվությունների վերաբերյալ համապատասխան որոշում ընդունել դրանք ստանալու օրվանից մինչև 20 աշխատանքային օրվա ընթացքում: Եթե ներկայացված հաշվետվությունների համաձայն իրականացված միջոցառումը համապատասխանում է ծրագրի և սույն պայմանագրի պահանջներին, ապա դրանք ընդունվում են: Ընդ որում, պետական մարմինը հաշվետվությունն ընդունելու դեպքում եռօրյա ժամկետում դրա մասին գրավոր ծանուցում է կազմակերպությանը:

2.4. Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1. իրականացնել ծրագրի շրջանակներում պետական մարմնի կողմից տրամադրված գումարների՝ Հայաստանի Հանրապետության հաշվապահական հաշվառման N 20 ստանդարտի դրույթներին համապատասխան հաշվառում.

2.4.2. պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել ծրագրով և (կամ) սույն պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով.

2.4.3. կատարել պետական մարմնի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները.

2.4.4. սույն պայմանագրով սահմանված կարգով պետական մարմին ներկայացնել միջոցառումների իրականացման մասին հաշվետվություններ, իսկ ծրագրի ավարտից հետո՝ ամփոփ հաշվետվություն.

2.4.5. սույն պայմանագրի գործողության ընթացքում ապահովել ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու պետական մարմնի հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում.

2.4.6. պետական մարմնի կողմից առանձին միջոցառումների իրականացման մասին հաշվետվությունները չընդունվելու դեպքում կազմակերպությունը պարտավորվում է անվճար՝ պետական մարմնի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել արձանագրված անհամապատասխանությունները.

2.4.7. ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան:

3. Մոնիթորինգը

3.1. Պետական մարմինը ծրագրի իրականացման նախնական, ընթացիկ և վերջնական արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ:

3.2. Մոնիթորինգն իրականացվում է պետական մարմնի և (կամ) նրա կողմից լիազորված անձի կողմից:

3.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով կազմակերպությանը տրվում են ցուցումներ, և կատարվում են առաջարկություններ:

3.4. Պետական մարմինը ցանկացած ժամանակ կարող է ծրագրի շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով ծրագրին առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր:

3.5. Մոնիթորինգի իրականացման ընթացքում կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

4. Վճարման կարգը և ժամկետները

4.1. Կազմակերպությանը վճարումները կատարվում են միջոցառումների իրականացման մասին հաշվետվությունն ընդունվելու օրվան հաջորդող 20 աշխատանքային օրվա ընթացքում, եթե ծրագրով սահմանված չեն վճարումների կատարման այլ կարգ և (կամ) ժամկետներ:

5. Կողմերի պատասխանատվությունը

5.1. Սույն պայմանագրով և ծրագրով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում կազմակերպությունը պարտավորվում է պետական մարմնին փոխհատուցել չիրականացված միջոցառման չափով և վճարել տուգանք՝ չիրականացված միջոցառման համար նախատեսված գումարի 1 տոկոսի չափով: Ընդ որում, տուգանքի վճարումը կազմակերպությանը չի ազատում իր պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պարտականությունից: Պետական մարմինը սույն կետով նախատեսված գումարները հաշվարկում և հաշվանցում է կազմակերպությանը վճարվելիք գումարներից:

6. Պայմանագրի գործողության ժամկետը

6.1. Սույն պայմանագրի պայմանները տարածվում են 2014 թվականի հունվարի 1-ից կողմերի միջև ծագած հարաբերությունների վրա և գործում է մինչև կողմերի ստանձնած պարտավորությունների ամբողջ ծավալով կատարումը:

7. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

7.1. Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և, որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. Եզրափակիչ դրույթներ

8.1. Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հաստատված ծրագիրը (հավելված 2) հանդիսանում է սույն պայմանագրի անբաժանելի մասը:
8.2. Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են կողմերի կողմից:
8.3. Պայմանագիրը կնքվում է պայմանագրի կողմերի թվին համապատասխան թվով օրինակով, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:
8.4. Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև սույն պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Պետական մարմին	**Կազմակերպություն**
ՀՀ բնապահպանության նախարարություն	**«Խոսրովի անտառ» պետական արգելոց» ՊՈԱԿ**
ք.Երևան, Կառավարական 3-րդ շենք ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	ք.Վեդի, Կասյան 78 «Արդշինինվեստբանկ» ՓԲԸ «Վեդի» մ/ճ
ՀՀ 900011007821 ՀՎՀՀ 02507198	ՀՀ 247760121803 ՀՎՀՀ 04108656
ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի ղեկավար **Է.Փիրումյան** (ստորագրություն) Կ.Տ.	«Խոսրովի անտառ» պետական արգելոց» ՊՈԱԿ-ի տնօրեն **Հ.Ղազարյան** (ստորագրություն) Կ.Տ.

Հավելված № 1
« 30 » « հունվարի » 2014թ. կնքված
№ ՀՀ-ԲՆ-ԴՇ-14/07 պայմանագրի

Պետական մարմին	**Կազմակերպություն**
ՀՀ բնապահպանության նախարարություն	**«Խոսրովի անտառ» պետական արգելոց» ՊՈԱԿ**
ք.Երևան, Կառավարական 3-րդ շենք ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	ք.Վեդի, Կասյան 78 «Արդշինինվեստբանկ» ՓԲԸ «Վեդի» մ/ճ
ՀՀ 900011007821 ՀՎՀՀ 02507198	ՀՀ [illegible]760121803 [illegible] 04108656
ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի ղեկավար	«Խոսրովի անտառ» պետական արգելոց» ՊՈԱԿ-ի տնօրեն
[illegible]	[illegible]

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ
«Խոսրովի անտառ» [illegible] արգելոցի պահպանության, գիտական [illegible]ությունների կատարման ծառայություններ» ծրագրի իրականացման

NN ը/կ	Իրականացվելիք միջոցառման					
	անվանումը	համառոտ բովանդակությունը	կատարման ենթակա գործառույթների նկարագիրը	ակնկալվող արդյունքները և դրանց գնահատման չափանիշները	վերջնա-ժամկետը	պահանջվող գումարը (դրամ)
1	Բնական էկոհամակարգերի լանդշաֆտային և կենսաբանական բազմազանության, բնության ժառանգության պահպանություն	Պետական արգելոցի և պետական արգելավայրերի տարածքներում և նրանց պահպանման գոտիներում՝ ա) պահպանության ընդհանուր միջոցառումների իրականացում, բ) հարող բնակավայրերի բնակչության շրջաններում էկոլոգիական իրազեկություն, էկոդաստիարակութուն, գ) պահաբաժիններում գարնանային և աշնանային հերթական և վերստուգիչ ստուգումների իրականացում (23359.8 հա)	Պահպանության միջոցառումներ աշխատակիցների կողմից պետական արգելոցի և արգելավայրերի տարածքներում ստուգումների և շուրջօրյա հերթապահությունների միջոցով, բացատրական և քարոզչական միջոցառումների կազմակերպում և իրականացում, արդյունքների ամփոփում ու վերլուծություն	Պատշաճ պահպանություն, հանրության իրազեկության պատշաճ մակարդակի ապահովում	31.12.2014թ.	**87 303 700**

2	Հակահրդեհային միջոցառումներ	Համագործակցություն տեղական և ինքնակառավարման մարմինների հետ՝ ներգրավելով նրանց պետական արգելոցի և պետական արգելավայրերի պահպանության և հակահրդեհային միջոցառումների իրականացմանը: Հակահրդեհային նշանակության ճանապարհներ վերանորոգում և հարթեցում (10կմ)	Հրդեհների կանխում	Համագործակցված պահպանության ապահովում և բարեկարգ ճանապարհներ	31.12.2014թ.	**1 500 000**
3	Էկոտուրիզմի զարգացմանն ուղղված միջոցառումներ	Պետական արգելոցի և արգելավայրերի էկոտուրիզմի զարգացման ծրագրերի մշակում	Աջակցություն էկոտուրիզմի զարգացման ծրագրեր իրականացնող կազմակերպություններին	Էկոտուրիզմի կազմակերպման մեխանիզմների մշակում	31.12.2014թ.	**2 430 000**
4	Գիտական և թանգարանային միջոցառումներ	ա) Խոշոր կաթնասուն կենդանիների հաշվառում բ) Որոշ գիշատիչ թռչունների թվաքանակի և տեսակային կազմի որոշում գ) Սողունների որոշ տեսակների տարածվածությունը և դրանց քարտեզագրման միջոցառումների իրականացում դ) Հավաքված բուսատեսակների (հերբարիումների) գույքագրում, տեսակային կազմի որոշում և քարտադարանի ստեղծում: ե) Պետական արգելոցի թանգարանի և գիտական լաբորատորիայի միջոցառումների կազմակերպում:	Դիտարկումների և հաշվառումների իրականացում գիտահետազոտական միջոցառումների միջոցով: Փորձահրապարակումների ընտրություն, բուսատեսակների հաշվառում և դասակարգում: Թանգարանային էտալոնային նմուշների պահպանություն և խնամք և ցուցադրում:	Հավաստի տվյալների ձեռքբերում, վերլուծություն և մոնիտորինգի իրականացում, գիտական միջոցառումների հաշվետվությունների կազմում 4 (չորս): Բուսական և կենդանական աշխարհի ներկայացուցիչների պատշաճ ցուցադրում:	31.12.2014թ.	**7 805 000**
ԸՆԴԱՄԵՆԸ						**99038700**

Հավելված № 2
« 30 » « հունվարի » 2014թ. կնքված
№ ՀՀ-ԲՆ-ԴՇ-14/07 պայմանագրի

Պետական մարմին

ՀՀ բնապահպանության նախարարություն

ք.Երևան, Կառավարական 3-րդ շենք
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն

00011007821
02507198
ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
«ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ»

«ՀՀ բնապահպանության նախարարության
տնտեսագիտական բաժնի պետ
Ա.Հարությունյան
(ստորագրություն)

Կազմակերպություն

«Խոսրովի անտառ» պետական արգելոց» ՊՈԱԿ

ք.Վայոց Ձոր
«Արոշինի գյուղատնտեսական ...»
247760121803
04408656
«Խոսրովի անտառ» պետական արգելոց» ՊՈԱԿ
տնտեսագետ
Հ.Ասատրյան
(ստորագրություն)

Գնառավարության կողմից հաստատված ծրագիր

Ծրագրային դասիչը		Մատուցվող ծառայության անվանումը **«Խոսրովի անտառ» պետական արգելոցի պահպանության, գիտական ուսումնասիրությունների կատարման ծառայություններ**	Ոչ ֆինանսական ցուցանիշներ				Ֆինանսական ցուցանիշներ			
1155	ԱԾ 08	Նկարագրություն Բնության հատուկ պահպանվող տարածքներում, ազգային պարկերում, պետական արգելոցներում պահպանության, գիտական ուսումնասիրությունների, անտառտնտեսական աշխատանքների իրականացում								
Չափորոշիչներ			I եռամսյակ	I կիսամյակ	9 ամիս	Տարի	I եռամսյակ	I կիսամյակ	9 ամիս	Տարի
Քանակական		ՊՈԱԿ-ի տնօրինության՝ ԲՀՊ տարածքներում գտնվող բնական էկոհամակարգերի լանդշաֆտային և կենսաբանական բազմազանության, բնության ժառանգության պահպանություն (պաշտպանություն), հա	23359.8	23359.8	23359.8	23359.8				
		Մարդու գործունեության հետևանքով ՊՈԱԿ-ի տնօրինության՝ ԲՀՊ տարածքներում գտնվող բնական էկոհամակարգերի հավասարակշռությունը խախտող գործընթացների կանխարգելման ապահովում, հա	23359.8	23359.8	23359.8	23359.8				

	ՊՈԱԿ-ի տնօրինության՝ ԲՀՊ տարածքներում հերթական վերստուգիչ ստուգումների անցկացում և արդյունքների ամփոփում, ստուգումների քանակը		1	1	2				
	ՊՈԱԿ-ի տնօրինության՝ ԲՀՊ տարածքներում էկոհամակարգերի լանդշաֆտային և կենսաբանական բազմազանության մշտական դիտարկումներ, բնության ժառանգության գիտական ուսումնասիրություն, հաշվետվությունների թիվը	1	2	3	4				
Որակական	Մշակված չէ								
Ժամկետայնության	Հերթական վերստուգիչ ստուգումների անցկացում և արդյունքների ամփոփում				գարնանային II-րդ եռ. աշնանային III-IV-րդ եռ.				
Մատուցվող ծառայության վրա կատարվող ծախսը (հազար դրամ)		X	X	X	X	15902.8	35781.4	63469.7	99038.7

Ծրագիրը (ծրագրերը), որի (որոնց) շրջանակներում իրականացվում է քաղաքականության միջոցառումը
1155 Բնական պաշարների կառավարման և պահպանման, բնության հատուկ պահպանվող տարածքների պահպանման ծառայություններ

Վերջնական արդյունքի նկարագրությունը
Բնական ռեսուրսների արդյունավետ կառավարման արդյունքում աղքատության նվազեցում, բույսերի և կենդանիների պահպանություն և վերարտադրության աճի ապահովում

Ծառայություն մատուցողի (մատուցողների) անվանումը
«Խոսրովի անտառ» պետական արգելոց» ՊՈԱԿ